«ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ «ՇԻՐԱԿ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ

ՀՀ, 3101 Գյումրի, Վարպետաց 176, 301 հեռ. +(374 312) 6-69-92,
+(374 91) 45-13-37
Էլ փոստ՝ infi@shirakcentre.org
Կայք՝ www.shirakcentre.org

ԱԳԿ Գյումրու տ/ս ղեկավար - անշարժ գույքի
պետական ռեգիստր Արայիկ Առաքելյանին

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՒՄ

Պարոն Առաքելյան.

խնդրում ենք մեզ տրամադրել տեղեկատվություն այն մասին, թե «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի հիման վրա մինչև օրս Ձեր կողմից ղեկավարվող կադաստրի մարմին որքան գործեր են ներկայացվել պետական գրանցում ստանալու նպատակով, դրանցից քանիսն են մերժվել և քանիսն են գրանցում ստացել: Ինչպես նաև խնդրում ենք մեզ տրամադրել գրանցում ստացած, ինչպես նաև մերժված բնակելի կառույցների ցանկը՝ հասցեներով և տնօրինողների անուն-ազգանուններով:

Կանխավ հայտնում ենք մեր երախտագիտությունն աջակցության համար:

Հարգանքով՝ «Շիրակ կենտրոն» ՀԿ նախագահ Վահան Թումասյան

Գյումրի
21.10.2010թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ
ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՅՈՒՄՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ

ՀՀ, Ք. ԳՅՈՒՄՐԻ, ԱԲՈՎՅԱՆ 248
ՀԵՌ. /0312/ 5-31-67,

«26» 10 2010թ.

Կգ-2957

«Քաղաքական մշակույթի և համաձայնությունների
զարգացման «Շիրակ կենտրոն» ՀԿ»
նախագահ Վահան Թումասյանին

Ի պատասխան Ձեր 21.10.2010թ-ի գրության

Հայտնում ենք Ձեզ, որ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի թիվ 45 հոդվածի պահանջների համաձայն անշարժ գույքի կադաստրի պետական ռեգիստրի տարածքային ստորաբաժանումների կողմից տեղեկատվության տրամադրումը վճարովի է և *այն կարող է տրամադրվել միայն սահմանված վճարի մուծման անդորրագիրը ներկայացնելու դեպքում:*

Ղեկավար՝ Ա. Առաքելյան

Կատարող՝
Ա. Մուրադյան